



## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՊՐՈՖ.—ԴՈԿՏ. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

### ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ<sup>1</sup>

ՃԳ. ՎԱՍՆ ԱՅԼԱԶԴԻ ԹԷ ՅԵԿԵՂԵՑԻ ՄՏԱՆԻՑԷ

Այլազգին թէ յեկեղեցի մտանիցէ առանց բռնութեան, չուր ցանեալ աւել  
ածցեն ուր հասեալ իցէ ոտն կամ ձեռն նորա եւ ի սղծեալ տաճարին մարգա-  
րէական եւ առաքելական եւ աւետարան վարդասցեն եւ աղաւթք մի զկնի: Թէ  
245 յետ ժամուն մտանիցեն, նոյնպէս արասցեն: Իսկ եթէ ի բնմն ելանիցէ բռնու-  
թեամբ եւ ի ներքս մտանիցէ արհամարհանաւք, զկարգն նոյնպէս վատարեա-  
188բ ցեն, բայց յարին պատարագ մի՝ մատուցեն: || Իսկ եթէ ի սուրբ խորհրդոյն  
յամանուն մերձեցաւ ձեռաւք շաւշափեալ ներքոյ եւ արտաքոյ, եթէ ի պատուա-  
կան անաւթոց իցէ, լուսացեն եւ վերստին աւծիցեն իւրովն սրբութեան եւ այ-  
250 նուհետեւ առցեն ի պէտս խորհրդոյն, ապա թէ ի դոյզն եւ շնչին անաւթոց իցէ,  
մի՝ առցեն ի պէտս խորհրդոյն, եւ փոխան նորա այլ դիցեն ի պէտս: Եւ թէ  
յայլ սրբութեան զգեստն մերձեցի, անխոտելի է: Նոյնպէս թէ յայլ կենդանեաց,  
ի սրբոց եւ յանարբոց, մտանիցէ յեկեղեցի, թէ ի ժամ գիշերոյն իցէ, նոյն  
աւրինակ կատարել զկարգն, յարին զպատարագն մի՝ խափանեցեն: Ապա թէ  
255 ի ժամ պատարագին մտցէ, խափանեն: Իսկ եթէ ի ժամանոց կամ ի կուժի  
մերձեցի, անխոտելի են, բայց թէ ի տաշտ նշխարին մերձ[եաց]ի, քերեսցեն:  
Ապա թէ ի ներքս աւթեալս առնիցեն, վերստին արհնեցեն: Իսկ եթէ զան-  
դանն շարժեալ ի խոնարհ արկանիցեն, զշարժեալ սեղանոյն վարդն կատա-  
րեսցեն եւ վերստին վանգնեցեն՝ ո՛չ առանց եպիսկոպոսի:

189ա 260

|| ԺԴ. ՎԱՍՆ ՄԿԱՆ ՈՐ Ի ՄԵՂՈՒԱՆՈՑ ԱՆԿԱՆԻՑԻ

Դարձեալ վասն մկան՝ թէ ի կենդանի մեղուանոց անկանի, անվնաս է,  
ապա թէ ի ճանճհանած զնստուցան լինիցի, անհպելի ի մաղսն, զծալրս մա-  
ղոցն հատցեն, եւ զայլն անխոտի կերիցեն: Իսկ թէ ի հպելն ծալրս մաղոցն,  
զայնոսիկ ողջոյն ի բաց հանցէ: Նոյնպէս որ ի մէջն զընդեմակ զերկոսեան  
265 մաղսն եւ զայլն կերիցեն, բայց յեկեղեցականացն: Ապա թէ արտաքոյ ի վե-  
րայն սատակեցի, անխոտելի է ամենեցուն:

257—258. Ա իսկ...արկանիցեն չի՞

<sup>1</sup>. Շարունակված ախազի 1952 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր համարից:

## ԺԵ. ՎԱՍՆ ԿԱՐԱՍԻ ԶՈՒՐ ՄՏԵԼՈՅ

Եթէ ի կարաս գինով ջուր անցանիցէ՝ եթէ յառոյ է, որ ի փողոցն գայցէ  
 279 յերեսաց ի ներքս մտցէ, ի պէտս հասարակացն վարեսցի, բայց ի սուրբ խոր-  
 հըրդոյ եւ ի խորհրդականաց:

## ԺԶ. ՎԱՍՆ ՀԱՅ ԿՆՈՋՆ, ՈՐ ԼԻՆԻ ԱՌ ՔՈՒՐԴԻ ՊԱՏՃԱՌՍ ՔՐԻՍՏՈՆԷՆԻԹԵԱՆ

Հայ կին թէ լինիցի առ քուրդի, գոլով քրիստոնեայ եւ ո՛չ մեկնեսցի ի  
 189բ նմանէ ի պատճառս քրիստոնէութեան, մի՛ որ հողորդեսցի // նմա ի քահանա-  
 յից կամ յաշխարհականաց, ի քահանայից մի՛ առցէ զխոստովանութիւն նորա  
 275 եւ մի՛ զմանկունս նորա ի մկրտութիւն եւ մի՛ հողորդեսցէ ի ժամ մահուան  
 նորա եւ մի՛ մատուցէ պատարագ յետ մահուան եւ մի՛ առցէ տուրս ընծայից  
 նորա: Ապա թէ յանդռնալ որ եւ զկանոնաց բանս խափանէ ի պատճառս  
 ագահութեան կամ երկիւղի, նշուեալ եւ ի կարգէն լուծցի: Բայց յետ դարձի  
 եւ ապաշխարութեան ընդունել պարտ է յեկեղեցի, նովա հանդերձ զնորայն  
 280 ամենայն եւ այնուհետեւ հողորդել ընդ նմա ամենեցուն անխտիր:

## ԺԷ. ՎԱՍՆ ԿՆՈՋ, ՈՐ ԱՌ ՔՈՒՐԴԻ ՆՍՍԻ

Վասն կնոջ, որ առ քուրդի կացեալ, եթէ մահուամբ եթէ կենաւ զղջացեալ  
 ի բաց կայցէ եւ հայի կին լինիցի, թէ յառաջագոյն արինաւորի ուրումն շէր  
 կացեալ կին, եւ եթէ միում կացեալ էր, եւ յետ այնորիկ առ քուրդի նստաւ,  
 285 առանց արինաց ունի, այն պոռնկութիւն է համարեալ: Յետ այնորիկ եթէ  
 վար/ուքն սրբիցէ եւ ի սրբութիւն փութացցէ, արժան է զնա կին առնել եւ մի՛  
 190ա խոտեսցեն վասն առաջին անսուրբ կենացն, որով վարեցաւ առ այլազգիսն:

## ԺԸ. ԿԻՆ, ՈՐ ՇՆԱՅ ԸՆԴ ՔՈՒՐԴԻ

Ընդ քուրդի շնայ կին, սողոմականան հանդերձ, թէ յաւժարութեամբ՝  
 290 կրկին ապաշխարեսցէ զշնութիւնն զսողոմականն, ապա թէ անայցելու գտեալ  
 եւ երկոքումբ շարիւքն բռնադատեալ, կամ աղախին ի տեսունէ իւրմէ նոյն  
 եւ ծառայ, անպարտական ան: Բայց վասն սրբութեան երեք ամ ապաշխարես-  
 ցեն: Բայց առն աւելի տեսանի, քան կնոջ, զի սոցա հնար տեսանի զերծա-  
 նելոյ:

## 295 ԺԹ. ՎԱՍՆ ՈՐՔ ԿԱՄԱԻ ԶԴՍՏԵՐՍ ԱՅԼԱԶԳԻՍՆ ՏԱՆ

Այլ եմ ի քրիստոնէից, որք կամաւ զգտեալս իւրեանց կին տան այլ-  
 ազգեաց վասն մարմնատուր կենաց: Նոյնպէս եւ զմանկունս իւրեանց ծախեն  
 յանհաւատութեանն եւ յապականութեանն: Այնպիսիքն նշուեալ հիղիցին ի  
 190բ կեանս եւ ի մահ եւ յետին // թոշակին մի՛ հիղցին արժանի:

## 300 Ի. ՎԱՍՆ ՈՐՔ ԶՄԱՆԿՈՒՆՍ ԱՅԼԱԶԳԵԱՅ Ի ՍՏԵԱՆՑ ԿԵՐԱԿՐԵՆ

Այլ քրիստոնեա[յ] վասն կնոջ չէ պարտ քուրդի տղայի ստեանց իւրեանց կե-  
 րակրել, քանզի մարդու է կաթն այն աւազանան: Եւ աւազանածոց, վերստին  
 ծնելոց, եւ ի Քրիստոս միացելոց, տղայացելոց մանկանց նոցա պարտ է ար-

305 բուցանել: Ապա թէ ոք մի անգամ եւ երկիցս արարեալ է յանգէտս եւ զըղ-  
ջացեալ, ամ մի ապաշխարեսցէ, իսկ եթէ սովորութեամբ անհոգացեալ եւ ան-  
զեղջ, զնոյն առնիցէ, նզովեալ եւ որոշեալ է ամենայն եկեղեցւոյ:

### ԻԱ. ՎԱՍՆ ՈՐԲ ԶԱՅԼԱԶԳԵԱՅ ՄՆՈՒՆԴ Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԱՌՆՈՒՆ

Դարձեալ սովորութիւն է քահանայից, որ զայլազգեաց ծնունդս ի մկր-  
տութիւն առնուն, այնպիսիքն անծանալք են խորհրդոցն Աստուծոյ, ո՛չ գիտեն  
310 թէ մեք ի մահն Քրիստոսի մկրտեցաք եւ թաղիմք ընդ նմա մկրտութեամբ: Այլ  
191ա նոքա որ ի մէնջ || մկրտին յայս խորհուրդ փրկական իբրեւ զմեզ, ոչ մկրտին  
խոստովանութեամբ, այլ հմայութիւն իմն դիւական ի պահպանութիւն անձանց  
իւրեանց որպէս կարծեն մկրտին: Վասն այսորիկ չէ՝ պարտ զանձառ խոր-  
հուրդ բանին առաջի արկանել, որ հրդիծուցանիցեն զմեզ փրկական խորհր-  
315 դովն, այլ ոմանք հնարին թերակատար իմն, միայն ջուր ցանել ի վերայ մարմ-  
նոց նոցա, պատճառն այս է, որ ի բարձրագոյն եւ մեծ պատուհասէն զեր-  
ծանին: Բայց համարձակութեամբ մեր է պատուիրանս, առաջի հեթանոսաց  
խոստովանել: Արդ, մի՛ ոք առնիցէ զայս, զի խաբէութիւն է: Այլ բոլորովին  
ոք զկարգ մկրտութեան կատարէ ի վերայ նոցա ըստ մեզ, լուծցի ի քահա-  
320 նայութեան կարգէն եւ մի՛ պատարագեսցէ զՔրիստոս: Եւ թէ մի անգամ ոք  
արարեալ, Ե (5) ամ արտաքոյ կացցէ եւ երկու՝ ի ներքս եւ ապա հաղորդե-  
ցի || արինացն, այլ ոչ պատարագին: Ապա եթէ անհոգաբար արարեալ ի նոյն,  
191ա մինչեւ ցմահ ապաշխարեսցէ եւ հաղորդեսցի արինացն: Այլ ի ժամ մերոյ  
մկրտութեան ի բաց կայցեն կանայք ի սուրբ աւագանէն, որպէս ի սուրբ խոր-  
325 հրդոյն: Նոյն եւ զապաշխարողան արտաքոյ կացուցանել պարտ է իբրեւ զայլ-  
ազգի, զի մի՛ տեսցեն աշար եւ ականջաւք լուիցեն զսուրբ խորհրդոյն զձայնն:  
Եւ մի՛ ոք եղիցի կնքահայր յապաշխարողաց, մանաւանդ ի կանանց, այլ յա-  
րանց եւ ի սրբոց եղիցին կնքահայր, վասն սուրբ խորհրդոյն որ արժանն է:  
Բայց ամենեւին ամենայն խորհրդով պարտ է հրաժարել ի կնքահայրութենէ  
330 այլազգեաց: Զի գինչ բաժին է հաւատացելոյն ընդ անհատտին եւ կամ Քրիս-  
տոսի ընդ Բելիարայ: Եւ թէ մի անգամ արարեալ ոք տգիտութեամբ, մեծաջան  
ապաշխարեսցէ, որպէս կամի քահանայն ողորմու[թիւն] արասցէ: Ապա եթէ  
արհամարհէ եւ անփոյթ առնէ զայս, [նզով] ի կեանս եւ ի մահ, Եւ քահա-  
նայն որ մկրտէ այլազգոյն մերձ կալով կնքահայրութեամբ, լուծցի ի կարգէն  
335 եւ մի՛ պատարագեսցէ զՔրիստոս: Ապա թէ մի անգամ արար եւ յետոյ զըղ-  
ջացաւ, եւ ջատագով եղիւ վարդին եւ արինաց, մի ամ ապաշխարեսցէ, եւ  
տեսցեն գիտնականք՝ եւ որպէս արժանն է՝ արասցեն:

### ԻԲ. ՎԱՍՆ ԿՐԱՆԱԽՈՐԱՑ, ՈՐ ԼԻՆԻՆ ՄՆԴԻԿՆՈՍԲ

340 Այլ ի կրանատրաց, բարեկամաց եւ սիրելեաց մի՛ ոք իշխեսցէ որդեգիր  
լինել մարն եւ կնքահայր մանկանն:

### ԻԳ. ՎԱՍՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ԵՒ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԱԻԱԶԱՆԻՆ]

Այլ քրիստոնեայ առնուն եւ հաւատացեալ ի Քրիստոս, յաւուր լուսա-  
345 րութեան զմանկունս, նույնպէս ի տան հալսանեաց պատկաւորաց ի Քրիս-  
տոս, մեծ խորհրդոյն այսորիկ, մի՛ ոք իշխեսցէ կաքաւել կամ պարել՝ ըստ

192թ ազգի՝ ազգի հեթանոսաց խանդուկը եւ փոխանակ Քրիստոսի եւ հր[եշ]տակաց  
 // դիւաց լինի բնակութիւն, զի՝ տունն ալմար զերկնից բերէ՝ զմանութիւն եւ  
 փեսայն՝ զՔրիստոսի եւ հայր փեսին՝ զհայրն երկնաւորին եւ զհայրն եկեղեցւոյ,  
 Իսկ հայր հարսին՝ զանաքելոց եւ զմարգարէից եւ ամենայն բաղմոնութիւն հրեշ-  
 360 տակաց սրբոց: Արդ, ոչ է պարտ զերկրաւոր եւ զդիւական խաղս ընդ երկնա-  
 յին եւ աստուածա[յ]ին եւ անճառ խորհուրդս խառնել: Այլ փոխանակ դիւա-  
 կան խաղոցն զհր[եշ]տակականն զերգս՝ երգել եւ փոխանակ հեթանոսական  
 ամաւթալից զրուցաւորութեանց, զսրբոց մարտիրոսաց նահատակութիւնս ճա-  
 ռել: Արդ, որ ի քահանայից որ մտանէ անդ, ուր ալսպիսի պատանական կա-  
 365 տարի խորհուրդս ալնպէս, եթէ ի մահեան դիւաց եւ ի տուն կոոց մտանեն եւ  
 ի զոհից անտի ուտիցեն: Եւ զայս ո՛չ յինէն անեմ, այլ ի կարգեալ կանոնաց  
 սրբոց վարդապետաց: Արդ, ծանուցի զվնասն եւ զգուշացուցի պատուիրա-  
 նաւ, զի պահեսցիք զնա եւ մի՛ ջնջեսցիք ի դպրութենէն կենաց, վասն որոյ  
 անպարտ եմ յարենէ ձերմէ, ահա ասացի ձեզ:

193թ 360

ՅԻՊ. ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴՈՅՆ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Եթէ մկնանկ գինով կամ նշխարով յանգէտս որ պատարագ մատուցանէ,  
 ամենայն ամանքն սրբութեան, յոր հասաւ պղծութիւն հանդերձ սկէծածկու-  
 թիւն, ի բաց խոտեսցեն, բայց ի հանդերձից սեղանոյն, եւ քահանայն երեք  
 շաբաթս պահաւ ապաշխարեսցեն՝ երկու արտաքոյ կալով եւ մի ի ներքս եւ  
 365 ապա հաղորդեսցին սրբութեան: Իսկ եթէ գիտութեամբ որ մատուցանէ, առ  
 ոտն հարկանելով զանճառ խորհուրդն, ի կարգէն լուծցի: Բայց վարդապետն  
 իշխանն է՝ որպէս կամի, արասցէ ըստ ապաշխարութեանն նոցա, որ է Գ (3)  
 ամբ. սրբապահութեամբ արտաքոյ եւ երկու շաբաթապահութեամբ ի ներքս եւ  
 ապա հաղորդեսցին՝ ի գիտութեան վարդապետին թողեալ: Իսկ ի դնել սպա-  
 370 սուցն արածեսցի մովն ի նշխարոյն եւ ո՛չ գիտացեալ քահանայն, մինչեւ  
 ցախն, որ առնու զհացն եւ զբաժակն եւ աւրհնէ, փոխեսցէ զնշխարն եւ այլ  
 դիցէ, եւ յառաջն սկսեալ կատարեսցէ զպատարագն, // իսկ յետ աւրհնելոյն  
 մինչ ի բաշխելն գիտացէ, խափանեսցէ զպատարագն: Թէ այլ որ լիցի, ճա-  
 շակեսցէ զանկատար խորհուրդն, ապա թէ ինքն միայն իցէ, [կերիցէ] եւ մի՛  
 375 թողցէ եւ ութ աւր արտաքոյ կայցէ սրբութեանն: Իսկ եթէ ի մկրտելն եւ ի մաս-  
 նաւորելն գիտաց, արասցէ զխորհուրդն եւ երիս շաբաթս արտաքոյ կացցէ  
 սրբութեան եւ ապա հաղորդեսցի, [իսկ ամանքն մի՛ խորտակեսցի]: Ապա թէ  
 գիտութեամբ ծուլացեալ եւ արհամարհանաւք անհոգացեալ մատուցանէ  
 զպատարագն, ջերմեռանդն եւ սուրբ ապաշխարութեամբ, [ամ] մի արտաքոյ  
 380 կայցէ եւ ապա մտեալ հաղորդեսցի: Իսկ եթէ քացախով առնիցէ յանգէտս,  
 կրկին ապաշխարութեամբ Գ (3) շաբաթ արտաքոյ կացցէ, ապա թէ գիտու-  
 թեամբ՝ ամ մի: Այլ թէ ջրախառն մատուցանէ յանգէտս, մինչեւ ցբաշխումնն,  
 ուր եւ գիտացցէ, ի բաց թողեալ եւ այլ մի՛ մատուցցէ: Ապա թէ ի բաշխելն  
 ծանիցի, կատարեսցէ զպատարագն // եւ ինքն մի ամ արտաքոյ կացցէ սրբ-  
 385 րութեան անխափան նովին կարգով: Ապա թէ գիտութեամբ մատուց, ի  
 կարգէն լուծցի եւ ապաշխարեսցէ այնու կարգաւ, որպէս կանոնք հրամայեն:  
 Այլ թէ երկուարեալ նշխարաւ որ մատուց յանգէտս, Գ (3) շաբաթ արտաքոյ  
 կացցէ նովին կարգաւ: Այլ թէ գիտութեամբ որ մատուց ծուլացեալ, երեք  
 քառասունք արտաքոյ կացցէ հաղորդութեանն եւ զմինն ի ներքս: Եւ ի կա-  
 390 տարիւթիւցն ճ եւ քսանիցն (120) մտեալ հաղորդեսցի: Իսկ եթէ ակթեկ ջրով  
 ի պատճառս ծուլութեան կազմէ զնշխարն, Ը (8) աւր արտաքոյ կացցէ հա-

193թ

194թ

386

ղորդութեան: Ապա եթէ հարկաւ հանդիպի հեռագրոյն գրով որպէս ի ձմերանի կամ յերկիւղէ աւաղակաց, մի՛ խախտանայ զպատարագն: Նոյնպէս թէ ձեռամբ պատահեսցի, առցեն ի սուրբ տեղեաց, անսխալ է՝ թէ Աստուած կամի: 194բ 395 // Այլ թէ մասն անգցի ի սուրբ սեղանն, երկս աւուրս կարգաւ ապաշխարեսցէ՝ մի աւր արտաքոյ, երկու ներքս եւ հաղորդեսցի: Իսկ եթէ իսկոյն ծածկոցն անկանիցի, անվնաս է: Ապա թէ առ ոտս սեղանոյն անգանիցի, ութ աւր արտաքոյ եւ երկու ի ներքս եւ ապա հաղ[որդեսցի]: Ապա թէ ի ներքոյ բեմին անգանիցի, երկու ութեակս պահեսցէ: Եթէ ի դինոյն հեղու ի սեղանն՝ ութ 400 աւր, իսկ եթէ ի խոնարհ՝ Խ (40) աւր՝ զերկս տասնն արտաքոյ եւ մինն ի ներքս եւ ապա հաղ[որդեսցի]: Իսկ եթէ ներքոյ բեմին հեղաւ, երկու Լ (60) աւր ապաշխարեսցէ:

### ԻԵ. ՎԱՍՆ ՀԱՂՈՐԴ ՏԱՆՈՅ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ

Այլ վասն հաղորդելոյ հարցման, այս է: Քահանայ թէ ամուսնացեալ 405 լինի, եւ առ աւրն հարկ հասանէ նմա այլ ոք ոչ գովով որ փոխան նմա հաղորդ տացէ, անվնաս է, բայց վասն խղճի մտացն՝ երկս կանոնաւ ծնորդութեամբ առանց արտաքոյ արքեսցէ զանձն իւր, և ապա // հաղորդի: Այլ թէ յանարժանից ոք իցէ, այլ ոչ գոյ ի սուրբ քահանայից, արժան է հաղորդել վասն կարգին, որ տնի: Այլ թէ հիւանդ խաւկաբեր անընդմիջելի կամ 410 որժասցի, մի՛ տացեն հաղորդ, մինչեւ դադարեսցի: Ապա թէ առեալ ի վեր բերիցէ, յաման առեալ արտաքոյ եկեղեցոյն առ հիմամբն, խոր թաղեսցեն եւ զցայտս անգեալ ի վերայ ձորձոյ, լուսացեն ի սուրբ տեղու: Եւ թէ այսուրիկ ոչ զգուշացաւ քահանայն կամ պատուրեաց, ինքն կրեսցէ զկարգն և հիւանդն անպարտ է:

### ԻԶ. ՎԱՍՆ ԿԱՆԱՆՅ, ՈՐ Ի ՄՆՈՒՆԴՍ ՄԵՌԱՆԻՆ

Ապա թէ կին ի ծնունդս մեռանի, ըստ խոստովանութեան նորա, տացեն՝ նմա զսուրբ խորհուրդն: Ապա թէ ի ժամու ծննդեան հանդիպի, քանզի պատուական է ամուսնութիւն եւ սուրբ անկողինը նորա, եթէ յապահարս իցէ կամ 420 ի տեղատեղութեան ցաւա եւ մահու դիպի, մի՛ զրկեսցեն յետին թոշակէն, զի այս գործ բնութեան է եւ ոչ մեղաց եւ կամաց:

### // ԻԷ. ՎԱՍՆ ԿՆՔՈՅ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ԱՅՍ Է

Նոյնպէս եւ վասն կնքոյն եղիցի բան, որպէս վասն հաղորդ տալոյն: Այլ թէ յառաջ քան դպտարագելն մկրտեսցէ, մի՛ պատարագեսցէ, եւ եթէ պատարագէ ըստ հարկին եւ յետ այնորիկ մկրտեսցէ, այսպէս արաւցէ եւ վասն 425 հաղորդ տալոյն: Այլ անպատրաստ եւ անարժան ոք է, զի այս առանց հարկի տեսանի, մի՛ պատարագէ: Եւ եթէ ճախ պատկեաց եւ այլ ոք ոչ իցէ, մի՛ պատարագեսցէ: Եւ եթէ պատարագեաց եւ այլ ոք ոչ իցէ, ընդ երեկս պատկեսցէ: Նոյնպէս թէ անպատրաստ լինիցի յարին յամուսնոյն կամ ի փորձանաց երազոյ պատճառէ, ընդ երեկս պատկեսցէ, բայց զկարգն երեկին հատուցէ: 430

## ԻԸ. ԱՅԼ ԹԷ ԱՆՉԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ ԻՇԱՅԱԻ ՈՔ ՅԵԿԵԼԵՑԻՈՂՆ

Այլ թէ որ իշացաւ յեկեղեցոյն, թէ աւամայ՝ Ը (8) աւր արտաքոյ, ապա  
 196ա թէ կամաւ անհոգացեալ՝ ամ մի: Բայց // վարդապետն իշխան է ըստ ապաշ-  
 խարութեան վարձել զժամանակն: Սոյնպէս եւ ի պատա[ր]ագին, եթէ աւա-  
 435 մայ՝ երկու ութնակս արտաքոյ կացցէ: Թէ կամաւ՝ ալլազգաբար յարհամար-  
 հանս եկեալ սուրբ խորհրդոյն, ի բաց կացցէ ի բահնայութենէն, զոր ու-  
 նի: Բայց ի ջերմեռանդն ապաշխարութիւն նորա հայեցեալ վարդապետն, իշ-  
 խան է որպէս կամի: Այլ եթէ զկարգ մի գոլով պատարագեաց յանգէտս,  
 440 շաբաթ մի արտաքոյ կացցէ: Ապա թէ դիտացեալ եւ պատարագեաց յաղագս  
 պատուաւորաց եկելոց փառասիրել կամ յաղագս ընծայից բերելոց հարկեցաւ  
 եւ զփառսն, որ յԱստուծոյ անարգեաց, այնպիսին ընդ անիծիւք է: Եթէ սովո-  
 թութեամբ առնիցէ զայս, ամենեւին ի բաց կացցէ ի սուրբ խորհրդոյն ի  
 կեանս իւր: Ապա թէ մի անգամ կամ երկիցս ըստ հարկի արար եւ յետոյ  
 196բ զղջացաւ՝ Խ (40) աւր արտաքոյ կացցէ // սրբութեան ջերմեռանդն ապաշ-  
 445 խարութեամբ, ապա հաղորդեցի: Այլ աւուրք ապաշխարութեան արտաքոյ  
 եկեղեցոյ որ լինի ըստ հարկի մեծի, որ զայ ի վերայ, իշխան է վարդապետն  
 արգելուլ եւ կարճել, այսինքն ի Ե.էն՝ Ա, ի Ժ.էն՝ Բ, ի Ի.էն՝ Դ, ի Լ.էն՝ Զ, ի  
 Խ.էն՝ Ը, ի Ծ.էն՝ Ժ, ի Ծ.էն՝ Ի: Եւ այսպիսի ընտրութիւն ի հարկաւոր ժամա-  
 նակի զջերմ ապաշխարութիւն քահանային տեսեալ, թէ այնպէս հանդիպի,  
 450 բարիոր է թողացուցանել պատարագ մատուցանել:

## ԻԹ. ՎԱՍՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ

Այլ քահանայ թէ ի պատճառս դեղոյ վերաբերութիւն առնէ, կամ ըստ  
 խստութեան ցաւոց որ ըմբռնեալ վերաբերեն, անվնաս է: Ապա թէ ի պատ-  
 ճառս կերակրոյ կամ ըմպելեաց լինիցի, Ը (8) աւր արտաքոյ կացցէ ի սուրբ  
 455 խորհրդոյն եւ է (7) աւր աւետարան մի՝ կարդացցէ: Բայց թէ հարկ լինիցի,  
 հինգերորդ աւրին կարդա: Ապա թէ յարեցեցութենէ լինի, Լ (30) աւր արտա-  
 197ա քոյ կացցէ սրբութեան: Իսկ եթէ սովորութեամբ արտացէ զայս, զժամն // ամե-  
 նեւին ի բաց թողցէ մինչեւ ապաշխարեալ զղջացի: Այլ տեսցեն դիտնականք  
 եւ արացեն տրպէս կամին: Ապա թէ պատարագեալ ի բռնութենէ ցաւոց վե-  
 460 րայ ձգի, Ժէ (15) աւր արտաքոյ կացցէ եւ Ի.ին (20) հաղորդեցի: [Ապա  
 թէ կերակրոց իցէ եւ ի հաւասար ըմպելեաց՝ Լ (30) աւր արտաքոյ եւ Ժ (10) ի  
 ներքս, եւ ապա հաղորդեցի]: Իսկ եթէ յարեցեցութենէ լինիցի՝ ներք քառա-  
 սունք արտաքոյ կացցէ, եւ յապաշխարութիւն նայեցեալ դիտնականաց, կար-  
 ճեցեն զժամանակն, որպէս եւ կամին: Ապա թէ երկուս կամ երիս աներկիւղ  
 465 սովորութեամբ ժայթքեալ, ի բաց կացցէ ի պատարագելոյ զՔրիստոս, զի  
 արեցողն ընդ զազանս է համարեալ:

Լ. ՎԱՍՆ ՈՐՔ ՉԱՆՁԻՆՍ ԻՐԵԱՆՑ ՄԱՐԴԱՀՈՒԹԵԱՄԲ  
ԹԱՔՈՒՑԱՆԵՆ Ի ՆԵՐՔՍ

Այլ են ոմանք որ մարդահաճութեամբ առ ամօթոյ անպատրաստ գո-  
 470 լով, սարդեալ ի ներքս մտանեն, զանձինս կարծեցուցանեն թէ ի հաղորդե-  
 լոցն իցեն: Թաքստեամբ ի ներքս կան ունայն, այնպիսիքն մի՝ իշխեսցեն առ-  
 նել զայդ, զի ո՛չ սիրէ ճշմարտութիւնն զառաչաւն առնել, // զի պիղծ է  
 197բ մարդահաճոյն առաջի Տեառն: Արդ, դու մարդ ես ընդ կարիւք անգեալ, ցոյց

զանձն քո որպէս ունիս եւ մի կերպարաներ, զոր ոչ ունիս: Ընդէ՞ր զանձն  
 475 անպարտ գոլով ընդ պարտիւր արկանես, ուստի խստագոյն պահանջիս  
 յԱստուծոյ:

### ԼԱ. ՎԱՍՆ ԵՐԱԶԱՓՈՐՁՈՒԹԵԱՆ

Երազափորձութիւն բազում արինակ տեսանի՝ է որ ի ընդ ժամանակի  
 առաւելեալն արտաքս հոսի, եւ է որ ի լոգութենէ մարմնոյ, է որ յաշխատու-  
 480 քենէ եւ ի հիւանդութենէ լինի, այսոքիկ անվնասք են: Եթէ յառաջ քան զգի-  
 շերոյն պաշտմանս լինի, զարն արտաքոյ կացցէ եւ վաղիւն պատարագեա-  
 ցէ: Իսկ եթէ յետ ժամու՝ յետ երկու արտաքս պատարագէ: Բայց թէ հարկ լինի,  
 վաղիւն հաղորդի: Այլ թէ տեսութեամբ լինի ամուսնոյ իւրոյ, արին արտաքոյ  
 կացցէ երկու կարգաւք եւ վաղիւն հաղորդեսցի: Իսկ թէ յաւտարի տեսութեամբ,  
 198ա 485 նոյն երկու կարգաւք՝ յարին արտաքոյ կացցէ եւ վաղիւն ի ներքս մտեալ, ի  
 միւս վաղիւն հաղորդեսցի: Իսկ եթէ յետ արձակման ժամու դիշերոյն լինիցի  
 տեսութեամբն ամուսնովն իւր կամ աստարաւ, յերրորդ ատուր հաղորդեսցի:  
 Եթէ քահանայի ամուսնով կամ անասնական փորձութեամբն սատանայէ՝  
 երկու արտաքոյ կացցէ եւ մի ար ի ներքս, եւ շորորդին հաղորդեսցի:  
 490 Ապա թէ ի վերայ դրաստու տեսանէ կամ խառնակումն անասնոց՝ յերրորդ  
 ատուր հաղորդեսցի: Ապա թէ յետ պատարագին փորձի ամուսնովն իւրով՝  
 Ե (5) արտաքոյ կացցէ եւ ի Զ.ին (6) հաղորդեսցի: Ապա թէ յղփու-  
 քենէ կերակրոց լինիցի՝ երեք արտաքոյ եւ մի ի ներքս եւ հինգերորդ  
 արն հաղորդի: Ապա թէ տունջեան տեսեալ կին ատար եւ ցանկացեալ եւ  
 495 մտաւն զկնի նորա ձգեալ եւ ի գիշերի փորձեալ նուաւ ի սատանայէ,  
 ի շնութեան սահմանի է, զի շնացաւ անդէն ի սրտի իւրում: Բայց որ ի  
 քուն եղեւ փորձանք նորա՝ երկու շաբաթ կացցէ կր/կին կարգաձուլեալմբ եւ  
 մի շաբաթ ի ներքս: Եւ եթէ մի անգամ եւ երկիցս լինիցի այսպիսի սահմա-  
 նով, հաղորդեսցի: Իսկ եթէ բազում անգամ հանդիպի սովորեալ անհոգու-  
 500 քեամբ եւ յաւտարութեամբ կնոջն իւրոյ կամ ի հայեցուածս բազմաց ձգե-  
 ցաւ մտաւք եւ յայն հանապաղ աղտեղեալ միտք նորա եւ ախտացեալ մար-  
 մինն, ի քաց կացցէ ի սուրբ խորհրդոյն հանապաղ:

### ԼԲ. ՎԱՍՆ ՆՈՒՐԵԼՈՅ Ի ՔՍՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Այլ կոչեցեալքն ի քահանայութիւն, ամենեւին սուրբ լիցին՝ հոգով եւ մարմ-  
 505 նով, Զի թէ առ հնովն եւ արինակումն այսպէս ունէր վասն անբան պատա-  
 րագացն, եւ զամենեւին առանց պակասութեան մատուցանել ի սեղանն,  
 ապա այս սեղան, որ վերլնկալ է տէրունեան մարմնոյն, ոչ կամի զարա-  
 տատրն մատուցանել յանճառ խորհրդոյն: Արդ, է պատահումն ի մարմնի որ  
 խոտի, եւ է որ՝ ոչ, Զի եթէ ի մատանց ձեռաց եւ ոտից ի սխալեալ իցէ կամ  
 199ա 510 բլթակ ունկանն հասեալ, կամ խեթ աշաւք կամ ծուռ ակնն, այսպիսիքս  
 անխտեալք են ի քահանայութեան: Իսկ ոտնատ կամ ձեռնատ, խուլ կամ կոյր,  
 պնշատ կամ շրթնատ, կամ պիսակոտ կամ ուրուկ, այսպիսիքս խտեալք են  
 ի քահանայութեան կարգս գալոյ: Իսկ բժաւորութիւն հոգւոյ այս է նուիրե-  
 ւոյն ի քահանայութիւն: Եթէ ի տղայութեանն ըմբռնեալ ուրուք գործովք ի  
 շարութեան, խոտելի է: Իսկ եթէ ոչ պատահեալ գործք, այլ ի վերայ հեղեալ  
 արտաքուստ շարակամին ախտ, ոչ է խտեալ: Եթէ երկու կատարեալք առ  
 միմեանս զայս առնիցեն, ի վերայ հեղումն անաւց գործոց, անարգեսցի[ն] ի  
 515 հեղումն այսոքիկք: Ապա թէ միւսոյն հեղումն խտեացի նա: Եւ միոյն, որ ոչ

վնասեալ ըստ շնորհին Աստուծոյ սա կոչեսցի՝ որպէս կամին գիտնականքն,  
 199բ 520 արաւցենն։ Իսկ համբոյր միմեանց կամ կնոջ, կամ ձեռնարկութիւն ի ներքս,  
 եւ հոսեալ // կամ կանաց եւ միմեանց ի տեղի գործոյ երթեալ, աւ ոչ գործեալ,  
 եւ ոչ հեղեալ, նորա ապաշխարութեամբ կոչեսցին։ Ապա թէ ձեռուր ի մի-  
 մեանց մարմին ըմբռնեալ մի անգամ կամ երկիցս եւ հոսեալ, ոչ գիտելով  
 զվնասն եւ ոչ ուրուր զգուշացեալ ղերկիւն, ծանր ապաշխարութեամբ Գ (4)  
 525 ամաւր ըստ յաջողութեան նորա որ ունի շնորհս յԱստուծոյ կոչեսցի քահ-  
 նայութիւն։ Իսկ եթէ բազում անգամ սովորեալ յայն, յերկարեսցի եւ յետ  
 պատուրելոյն մի անգամ լինիցի հաւասարապէս, սորա խոտեսցին եւ մի՛  
 բնորեսցին։ Քահանայ եթէ ունիցի զայն, ի բաց կացցէ ի քահանայութենէ։  
 Ապա թէ յառաջագոյն ունէին եւ ծածկեցին աւ յետոյ յայտնեցաւ, ի բաց կաց-  
 530 ցենն ի պատարագելոյ եւ մի՛ իշխեսցեն հպել ի գործ պաշտամանս աշտորիկի,  
 200ա Այլ թէ մանկունք ի միմեանց բերան ածիցեն առանց ախտի, կոչեսցին // նո-  
 քա, իսկ եթէ ախտի՝ մի՛ կոչեսցին քահանայութեան։ այլ ըստ հաւակին եւ  
 ըստ ապաշխարութեան հաղորդեսցին ի մէջ ժամանակի, կենաց թաւակին  
 արժանացին։

535

#### ԼԳ. ՎԱՍՆ ՈՐ ԳՐԱՍՏ ՆՍՏԻՆ ԵՒ ԹԱՅԱՆԱՆ

Այլ թէ ի վերայ գրաստու թացութիւն լինի, առանց խորհրդոյ, երեք ար-  
 արտաքոյ կացցէ։ Իսկ եթէ հոսումն միայն յերկիւղէ, առանց խորհրդոց՝ շա-  
 բաթ մի արտաքոյ։ Ապա թէ խորհրդով խոնաւի բնութիւնն՝ Ժ (10) ար-  
 տաքոյ եւ Բ (2) ի ներքս, ապա հաղորդեսցի։ Իսկ եթէ հոսումն ի խորհրդոց  
 1540 լինիցի, Լ (30) արտաքոյ կացցէ եւ Խ (40) հաղորդ[եսցի]։ Եթէ մերկ ի  
 գրաստու նստի եւ ի խորհրդոց թացութիւն լինի, մարմնաշարժութեամբ, երեք  
 շաբաթս արտաքոյ կացցէ սրբութենէ, եւ հինգ արտ ի ներքս եւ [ապա] հա-  
 200բ 540 ղորդեսցի։ Ապա թէ հեղումն լինիցի՝ երեք քառասուն կարգածութեամբ կըր-  
 կին, եւ պահաւր, եւ ապա՝ հաղորդ[եսցի]։ Եթէ արթնութեամբ յանկարծ թա-  
 ցութիւն լինի, առանց խորհրդոյ՝ մի արտ։ // Եթէ հոսումն առանց պատճառի՝  
 Բ (2) արտ եւ յերեքին հաղորդ[եսցի]։ [Իսկ սերմնակաթնն զարժանապաղ  
 արտաքոյ կացցէ, մինչեւ սրբեսցի]։ Ապա թէ ոք, ի մոլեցուցանելոյ զախտն  
 անիծեալ, ելանէ յերկմարս եւ յերասանակս կացցէ ի յարշաւանս թոյլ-տալ  
 եւ հոսեցուցանել հեշտութեամբ զախտն յանձնէ՝ եթէ քահանայ է, ի պատա-  
 550 րագէն ամենեւին ի բաց կացցէ։ Այլ թէ մի անգամ զայս արարեալ, երեք ամ  
 ապաշխարեսցէ, ապա թէ սովորութեամբ ի նոյն յերկարեալ, գիտնականք  
 որպէս կամին արասցեն երկոցունց։ Այլ թէ ի նուիրելոց ոք ի քահանայութիւն  
 առնիցէ զայս մի անգամ, իշխանք են վարդապետք Գ (3) ամ ապաշխարու-  
 555 թեամբ որպէս կամին արասցեն։ Իսկ ղերկարեալն ի նոյն գործ՝ մի՛ իշխես-  
 ցեն կոչել ի քահանայութիւն։ Այլ թէ ի նստածէ մարդոյ կամ յայլ կենդան-  
 եաց, կամ ի նոցունց միզէ քնդ խաղ արկանիցեն մանկունք ի բերան ման-  
 201ա կան, որ նուիրեալ իցէ ի քահանայութիւն, կամ ի պատճառս դեղոց, // կոչե-  
 ցին նորա ի քահանայութիւն։ Ապա թէ քահանայի հանդիպի վա[ն]ն դեղոց  
 նստած մարդոյ կամ զանսուրբ անասնոյ՝ մի՛ առցէ։ Եթէ ի պատուհասի պատ-  
 560 ճառս յաւազաց կրէ ոք զայս կամ նախատանաւր յայլազգեաց, զատուցեն զնա  
 ի պատարագէն, բայց զայլ կարգն պաշտեսցէ։ Իսկ ի սուրբ կենդանեաց միզէ  
 կամ ի կտտէ ի պատճառս դեղոյ առնու քահանայ, երկիցս քառասուն կարգա-  
 ծութեամբ հաղորդի։ Այլ թէ աշխարհականի հանդիպի, այս է. ի յերիցն միով  
 մասամբ պակաս ի քահանայիցն ապաշխարեսցեն։

565 17. ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ, ՈՐ ՊԱՏԱՐԱԳԻՆ ՀԱՐԿԻԻ ՁԱՏՆԵՆ ԱՌ ՆԱ ՎԱՍՆ  
ԿՆՔՈՑ ԵՒ ՀԱՂՈՐԴԵԼՈՑ ՀԻՒՆԵԼԻՆ

201 ք Այլ յորժամ քահանայն ի սուրբ խորհրդին իցէ եւ ըստ հարկի ձայնեն  
առ նա յաղագս կնքոյ եւ հաղորդի, մի՛ խղճեալ յապաղեսցէ եւ անփոյթ  
արասցէ, այլ կնքեսցէ զբանն // որում տեղոջ էր ի պատարագին եւ ծածկեսցէ  
570 պատրաստութեամբ եւ երթեալ տացէ կնիք երեխային եւ հաղորդ մերձ ի  
մահինն եւ եկեալ առցէ զբանն ուր եթող եւ կատարեսցէ զխորհուրդն: Իսկ  
եթէ հաղորդ ոչ լինի, մատուցէ զպատարագն մինչեւ ի սահման բաշխմանն  
եւ նախ քան զճաշելն իւր առցէ ի սուրբ խորհրդոյն եւ երթեալ տացէ նմա  
զկենաց թաշակն եւ ապա եկեալ կատարեսցէ զսուրբ խորհուրդն: Բայց թէ  
575 շնչոյ քահանայն ոչ հասաւ հիւանդին, անպարտ է: Այլ թէ ի տգիտութենէ  
զարհուրեալ ի սուրբ խորհրդոյն անփոյթ արասցէ, փոքր վարժելով զայսցա-  
նէ Դ (4) շաբաթ արտաքոյ կացցէ սրբութեանն եւ ապաշխարել վասն ան-  
գիտութեան՝ Լ (30) հաղորդեսցի: Ապա թէ գիտուն էր եւ ի ծուլութենէ կամ  
յոխ պահելոյ անփոյթ արար կամ արտաքոյ կամ ի պատարագին, զայսցանէ  
202 ա 580 որ գրեկ/ցաւ, լուծցի ի կարգէ քահանայութեան:

18. ՈՐՔ ԶՄԱՆԿՈՒՆՍ ՎԱՐՁՈՒ ԿԱՄ ՀԻՒՆԵԼԻ ԱՒԵՏԱՐԱՆ [ԿԱՐԴԱՆ]

Այլ քահանայ, վանական կամ աշխարհական, որք զմանկունս վարձու առ-  
նոն յուսումն, վաճառ եւ դին դնեն Աստուծոյ շնորհացն, կամ վարձու թա-  
ղեն զմեռեալս կամ ժամ մի թողացուցանեն՝ զմեռեալ ոչ թաղել, ասելով՝ թէ  
585 ոչ տայք զվարձն իմ, չթաղեմ, այնպիսի քահանայքն, որ անարգեցին զխոր-  
հուրդն Աստուծոյ եւ արհամարհեցին զհրաման նորա՝ թէ Ձրի առէք եւ ձրի  
տուք, լուծցին ի կարգէն եւ նզովեսցին ի մահ եւ ի կեանք: Բայց թէ կա-  
մաւ իւրեանց, պահանջելոյ մեր տան զպէտա, զի արժան է մշակն վարձոյ,  
այսինքն՝ վերակրոցն եւ ըմպելեաց, որպէս Պաւղոս գրէ, հաղորդութիւն արաս-  
ցէ աշակերտն վարդապետին յամենայն բարութիւնս: Արդ, թէ տացեն նո-  
քա ամենայն յաւատարմութեամբ, անվեհեր զհոգեւորսն սերմանեսցեն ի նոսա  
590 եւ առցեն ի // նոցանէ առանց խղճոյ եւ ամաւթոյ, ապա թէ տրտնչելով տա-  
ցեն, մի՛ առնուցուն ի նոցանէ: Այլ կերակրեալ եւ որ ընդ քեզ են ձեռն տուր եւ  
աննախանձաբար սփռել ի նոսա զշնորհս Հոգոյն Սրբոյ, յորոց վերայ կարգե-  
ցար մատակարար եւ վերատեսուչ յԱստուծոյ:

19. ՎԱՍՆ ԹԷ Ի ՊԱՏԱՐԱԳԻՆ ՊԱՐՏ Է ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՆԻՄՔ ՀԱՆՆԸ

Ա՛ն, ի բաց զայդ տար ի բռնմէ կարճատութենէդ, քանզի տեղին այն  
ահատր եւ սարսափելի է, ոչ վ տեղի տրտմութեան, այլ ուրախութեան, ոչ  
բարկութեան, այլ հեղութեան, ոչ խռովութեան, այլ խաղաղութեան, ոչ անի-  
ծանել զանիծիշս մեր եւ զհալածիշս, այլ արհնել, զթշնամիսն սիրել, ոչ նա տե-  
600 դի կապանաց է, այլ ազատութեան, որով Քրիստոս զմեզ ազատեաց ի վա-  
պանաց մահու եւ մեղաց եւ շարշարողացն իւր ի վերայ խաչին աղաթս առ-  
նէր՝ Հա՛յր, թո՛ղ դոցա: Եւ զայն մարմին շարշարեալ հոս մեզ կերակուր եւ  
յիշատակ յաւիտենից իւրոյ // անսխալականութեանն: Անէ՛ Ձայս արարէք  
203 ա 595 առ իմոյ յիշատակի, այսինքն՝ որպէս ես արարի եւ դուք առնիչիք: Արդ, մի՛  
ոք եկեսցէ յայնպիսի վարճատութիւն: Ապա թէ ոք մի անգամ կամ երկիցս  
անգիտացեալ անէծ իցէ հանցեալ թշնամոյն, եւ յետոյ զղջացեալ, Խ (40)

ար արտաքս կացցէ եւ յԾ (50) հաղորդեսցի: Ապա թէ սովորութեամբ կամաւ անգիտացեալ զանճառ խորհուրդն Բրիտտոսի, զարհանապազ ի բաց կացցէ ի սուրբ խորհրդոյն:

ԼԷ. ՎԱՍՆ ԱՆՅՈՒՄԻՑ ԲՈՆԱԽՈՐԱՑ ՈՐ ԳԱՅՑԵՆ, ԵՒ ԵՍ ԱՌ ՀԱՐԿԻ  
ՇՆՈՐՀՈՒԿՍ ԱՐԱՐԻ

Եթէ անյուսից բռնաւորաց ոք եկեսցէ և առ հարկի ոք շնորհովս առնէ, որպէս թէ ի պատիւ նմա սեւ նա շնորհովս ոչ ունի պարգեւին, այլ առ ցոփութիւն մտաց իւրոց աներախտի ընդունի, պարտ է ամենայն հասաստութեամբ փորձիւղ իմանալ, որ ի նմանէ խորհուրդ եւ ի բանիցն եւ ի շրթանցն իմացեալ // թէ ապերախտ գտանի, ոչ է պարտ զմարգարիտ արկանել առաջի խոզից, զի մի՛ առ ոտն կոխիցեն եւ դարձեալ երգիծ[ուցանէ]: Ապա թէ անգիտացեալ, յերկրորդումն մի՛ աշխատ առնիցի:

ԼԸ. ՎԱՍՆ ԱՆՍՈՒՐԲ ԱՆԱՍՆՈՑ ԶԵՆՄԱՆՑ

Այլ վասն անսուրբ կենդանեաց զենման հարցեալ՝ այս է. եթէ ոք պատարագ մատուցանիցէ իրաւապէս եւ այլ ոք ընդ քէն կամ ընդ խաղ ասիցէ, անսուրբ է, պատուհասեն զնա, զի դատարկաբանեաց եւ զմիսն անխիղճ կերիցեն ամենեքին: Ապա թէ քահանայ ոք ասիցէ զոհեալ է կամ հեղձուցիկ, տեղեկացեալ ճշտիւ քննեսցին եւ հաստատեալ զբանն, նախ շահեսցին զքահանայն եւ ապա կերիցեն. ինքն տացէ պատասխանի Աստուծոյ վասն անիրաւ խաւիցն: Ապա թէ յափշտակութեով կամ ի զրկանաց իցէ զենեալն եւ ասիցէ ոք յաշխարհականաց կամ ի քա//հանայից, ի բաց ընկեսցեալ կերիցեն զնա շունք եւ ոչ մարդիկ: Այլ թէ դահավէժ լինի կենդանին եւ ջանայցէ ոք զնա կենդանի ըմբռնել ի զենուլ, թէ աքոյ տա[լ] եւ արին ոչ ելանէ, սուրբ է, թէ արին ելանէ ի բաց հոսմամբ եւ ոտն ոչ շաշէ, սուրբ է: Եթէ յորդ արիւն ելանէ առանց ցայտման եւ հոսման եւ առանց ձայն արձակելոյ խռակին, հեղձուցած է, մի՛ ուտիցի:

ԼԹ. ՎԱՍՆ ՀԱՒ ՄԱՆԿԱՆ, ՈՐ ԳՆԱՅ Ի ԳԻՆԸՄՊՈՒԹԻՒՆ

Այլ հայր մանկան զնացեալ իցէ առ գինըմպուս կամ ի գործ ինչ եւ մանուկ սորա անկատար դիմեալ առ հայր իւր եւ հեղձեալ ի գետ, զի ոչ գիտաց ի նոցանէ, անպատուհաս են վասն անգիտութեանն, բայց վասն արբեցութեան, զի եղին պատճառ կորստեան մանկանն, երիցս քառասուն պահեսցեն՝ զերկու սրբապահութեամբ եւ զմիսն շաբաթապահաւք՝ ճ (100) ծննդաւ, իսկ հայր մանկանն ամ մի պահեսցէ՝ զվեց ամիսն սրբապահութեամբ եւ զվեց շաբաթապահութեամբ ծննդութեամբ: // Նոյնպէս եւ մայր մանկանն:

Խ. ՎԱՍՆ ՄԱՒՐ ԹԷ ԱՆԿԱՆԻ ԸՆԴ ՔՈՒՆՆ Ի ՎԵՐԱՅ ՄԱՆԿԱՆՆ ԵՒ ՄԵԼՈՒՆԻ

Այլ եթէ ընդ բուն անկանի [մայր] ի վերայ մանկուն, կամ անհոգացեալ մանուկն ի հուր անկանի և այրի՝ Ե (5) ամ ապաշխարեսցէ՝ միսն սրբապահութեամբ, իսկ զԲ (2) շաբաթապահութեամբ եւ դարձեալ զերկու երիցս քառասուն պահեսցէ:

### ԽԱ. ՎԱՍՆ ԳՈՂՈՑ, ՈՐ ԸՄԲՈՆԻՆ ԵՒ Ի ՓԱՅՏԱՔԱՇԻՆ ԱՅՍ Է

Այլ վասն գողոց ի փայտ հանելոյ, եթէ քուրդ իցէ եթէ հայ, եւ մարդոյ հրամայիցեն ի փայտ հանել, թէ հնար իցէ խոյս տացէ ի տեղոջէն, ապա թե՛ կաշառով զերծցին: Իսկ եթէ այսու ոչ ապահանջեն, ապա զհրամայեալսն ի տէրանց պարտ է կատարել, այլ ոչ առաւելութեամբ, որպէս հրամայէ Յովհաննէս զինուորացն, թէ մի՛ առաւել քան զհրամայեալսն առնիցէք, քանզի Աստուած ի սիրտն հայի, որպէս ասէ Տէր:

### ԽԲ. ՎԱՍՆ ՄԱՐԴՈՑ, ՈՐ ՈՒՆԻ ԱՆԱՍՈՒՆ ԽԵՌ ԿԱՄ ԶԻ ԿԻՅ[ԸՆԿԵՑ]

Այլ եթէ մարդոյ լինի շորի խեռ կամ ձի կիցս ընկեց, կամ մարդակեր, կամ եզն հարկանող եւ անգիտացցէ եւ այլք ազդեացեն նմա, յի բողոք բարձեալ զվնասն ցուցանիցեն եւ նա յանհոգա գայցէ եւ ոչ հնարեսցի զնա որպէս արժան է, սպանցէ զոք, տէր նորա մահապարտ է: Թէ յանսուրբ անասնոց է, թէ ձի, թէ շորի, ի մեռելոյն տէրքն տացին, զի ի պէտս հոգեցն ծախիցեն:

### ԽԳ. ՎԱՍՆ ՄԱՐԴ Ի ՃԱՆԱՊԱՐՀ ՅՈՒՎԱՐԿԵԼՈՑ ԱՏԼՈՒՄ

Այլ մարդ ի ճանապարհ յուղարկել ումեք բազում արերնակ տեսանին ի հարցմտման խղճի եւ անխղճի, զի են ումանք, որ ի գործս մշակութեան կարգեալ ի տերանց իւրեանց եւ կէսք յաղթագործութիւն եւ այլք ի զինուորութիւն են այլքն յայլ գործ, որ ի պէտս մեր հասարակաց կենաց: Այլ եթէ ի գործս իւրեանց եկեացէ որոգայթ մահու, անպարտք են տեարք նորա, մասնաւոր աշխարհի, որ զպատրաստութեան պատուէրն հանապազ կացուցանեն ի լսելիս հնազանդելոց իւրեանց, ապա թէ հասարակ միաբանութեան սիրոյ եւ խաղաղութեան մերոյ կենաց զընդդէմսն հրամայեն գործել տեարք ծառայից եւ անդ պատահիցէ ումեք մահ յի կամ սպանումն, մահապարտ է տէր նորա: Դարձեալ, եթէ ոք ի նոցանէ ծանուցանէ տեսառն իւրոյ զվնաս նորա առաջիկայ եւ նա անհոգացեալ անպատրաստաբար առաքէ զնա ի գործ եւ պատահի վնասն, յորմէ խիթայր, որ առաքեացն, արեամբ պարտ է: Իսկ եթէ ոք զայլ ոք որ ոչ իւր իցէ եւ առաքէ ի գործ իւր եւ անդ, որ որոգայթի, արեան պարտ է: Այլ թէ վարձկան ոք լինի եւ ասէ ցտանուտէրն թէ առաքեա զիս եւ կամ տուր ինձ գործ, զի արարից, իսկ նա յառաջապատրաստ ծանուցանէ նմա զորոգայթն եւ նա առ կարիս հարկի իւրոյ յանձն առնուցու եւ նա կրկին զանպատրաստութեան բանն ասէ առ նա, եւ անդ պատահի նմա, անպարտ է: Է եւ այլ, որ ի վաղիւն գործի ամենայն զգուշութեամբ եւ ի բազմաց վկայեալ վնասն, առաքիցէ կամ գործել հրամայիցէ եւ անդ հասանէ նմա որոգայթ մահու, արեան պարտ է:

### ԽԴ. ՎԱՍՆ [ՄԱՆԿԱՆ], ՈՐ ԱՆԿՆՈՒՆՔ ՄԵՌԱՆԻ

Այլ վասն անկնունք մեռանելոյ մանկան այս է: Թէպէտ եւ անկատար մեռանի, որ ոչ ունէր զլուսատրութեան ծնունդ առաջանին յաստուածածնութիւն անկատար ծնունդ մարդկան, սակայն յաստուածածնիցելոց անձանց քրիստոնէից եւ մարմնոյ նոցա ծնեալ մանկունք են: Վասն որոյ մասին կնքոյ հասեալ գոն, արժան է վասն աշխրիկ եւ վասն անմեղութեան անձին իւրոյ խաշիւ եւ արհնութեամբ թաղել զքրիստոնեայն ընդ այլ քրիստոնեայն: Եւ եթէ մեռեալ բերիցէ մայր զմանուկն, թէ արու իցէ եւ ինքն երկու ամսական կամ քերք, քանզի ի Խ (40) ար շնչաբերի մանուկն եւ կենդանանայ:

- 690 յախմհետէ գիտացեալ որ ծնաւ զնա, պարտ է ի դիր թաղել, խաչիւ եւ աղա-  
 206բ թիւք միով կնքել զգերեզմանն: Իսկ եթէ ամասարեայ իցէ նկարեալ սաղմն  
 լորովայնին եւ ի պատահմանէ վիժանի դոնդողի իմն է մած[նու]մն արեանն,  
 ներքոյ հողոյ արասցեն: Ապա թէ չիգաց է, // յառաջ քան զՁ (80) արն վիժի  
 նկարեալն լորովայնին, նոյնպէս ի ներքոյ հողոյ [արասցեն]: Ապա թէ յետ  
 695 երկուց և (40) աւուրց կամ երից եւ յետ այնորիկ արտաքս ելանիցէ մանուկն  
 մեռեալ, քանզի էզն յութսոն արն շնչաբերեալ կենդանանայ, պարտ է ի  
 քրիստոնէից դիրս դնել և խաչիւ եւ արհնութեամբ կնքել զգերեզմանն:

### ԽԵ. ՎԱՍՆ ՓԱԽՈՒՑԵԱԼ ԳԵՐՈՅ

- Այլ վասն փախուցեալ գերոյ եւ ի մեզ դիմելոյ, թէ զկնի եկեսցէ տէր  
 700 նորա եւ խնդրէ, մի՛ ոք երդնուցու ամենեկին, այլ հաւանեցուցէ բանիւ կամ  
 կաշառաւք, ապա թէ ոչ՝ ամենեքին զփրկանս տայցեն ընդ անձին: Եւ թէ  
 ախու ոչ վճարին իրքն եւ նոքա բռնութեամբ կամին գրաւել զմեզ, ոչ է պարտ  
 պարտ անձն ընդ անձին փրկանս տալ, զի այս Քրիստոսի Աստուծոյ մերոյ  
 միայն վայել է: Այլ թէ յանցաւորութեամբ լինի ծառայ փախուցեալ ի տեսա-  
 705 նէ եւ առ մեզ դիմեսցէ եւ տէր նորա հետամուտ եղեալ մինչ գտանիցէ՝ սպա-  
 նանիցէ, թագուցանել պարտ է եւ բազում հնարիւք ջանալ մինչեւ զերծցի, եւ  
 յետ ամենայն հնարից մինչեւ // ի զգեստ մարմնոյ հանել եւ տալ: Եթէ ոչ  
 207ա հա[ւ]անի քինախնդիր եղեալ յանցանացն յաղաքս գազանութեան իւրոյ, եւ  
 լայն եկեալ զի երդումն պահանջէ, եւ զայն ի քահանա[ւ]էն, մի՛ երդնուցու,  
 710 այլ՝ ժողովրդականքն, զի փրկեսցեն զառաջնորդն իւրեանց: Ապա թէ ոչ հա-  
 ւանեալ, երդումն քահանային հասանէ, երդնուցու եւ փրկիցէ զգերին եւ յետ  
 այսորիկ մի՛ պաշտիցէ զքահանայութիւն: Իսկ եթէ զերդումն ոչ պարզաբար  
 ի խաչ եւ յեկեղեցի, բանիւ կամ ձեռն դնելով, այլ ուրացութիւն խնդրէ ի քա-  
 հանայէն կամ յաշխարհականէ այսպէս՝ թէ առ ուն կոխել զխաչն, կամ ծիր  
 715 առնել Քրիստոսի եւ Մահմետի, կամ շուն ի գիրկս առնուլ եւ յեկեղեցի մտա-  
 նել, կամ ջուր եւ ձէթ ի բերանոյ ի բաց փչել, կամ ի վերայ եկեղեցւոյ լուսոյ  
 ջուր փչել եւ անցուցանել, կամ զձէթ շան բերանով ըմբռնել, կամ թէ յանբան  
 կենդանեաց տալիպէ ասել, թէ զնա պաշտէ, եւ այլ այսպիսի շարիւք հնարի  
 207բ յըսրկութենէ երդումն, մի՛ ոք առ[ն]ցէ յանձն, մի՛ ի քահանայից եւ մի՛ յաշ-  
 720 խարհականաց, քանզի չէ պարտ փրկել զոք ուրացութեամբ զՔրիստոս, քան-  
 զի եւ Քրիստոս ոչ ուրացաւ զաստուածութիւն իւր, որ ի հարէ եւ առ հար  
 առաջի Պոնտաց[ւ]ոյ Պիղատոսի, այլ մատենաց զանձնն շարշարողացն: Արդ,  
 թէ տացէ որ զանձն ի փրկանս փոխանակ արեան նորա, ինքն գիտէ, բայց  
 զսուրբ հաւատ ոչ ունիմք վաճառել եւ դնել արիւն, եւ մինչեւ յարին իւր եկեալ  
 725 ոչ կարաց դարձուցանել զպահանջողն, միաբան տացեն մինչեւ ցլափ գնոյ  
 նորա կաշառու՝ եւ զարին նորա գնեսցեն: Եւ ըստ աւրինաց իւրեանց երդումն  
 նմա եւ այնպէս ամենայն հաւաստութեամբ տացեն ի նա զգերին: Իսկ եթէ  
 պահանջողը նենգեալ երդմանն սպանցեն զգերին, անպարտ են գնողքն՝ թէ  
 Տէր կամի:

(Շարունակելի)

697. A խաչ իւր փախ. խաչի:

706. A թաքուցանել

717. A ձէտ

719. A երդումն

720. A քանզի չէ պարտ... զՔրիստոս չի՞

724. A սուրբ